2021թ. «Բարձր տեխնոլոգիական հենքի վրա տնտեսության դիվերսիֆիկացման հնարավորություններն ու կառուցակարգերը ՀՀ-ում» թեմայի վերաբերյալ հաշվետու ելույթ

Զեկուցող՝ թեմայի ղեկավար Ս. Դալլաքյան

Հարգելի գործընկերներ և հյուրեր, ձեր ուշադրությանն եմ ներկայացնում 2021 թվականի **«Բարձր տեխնոլոգիական հենքի վրա տնտեսության դիվերսիֆիկացման հնարավորություններն ու կառուցակարգերը ՀՀ-ում» թեմայի հիմնական արդյունքները**:

Բազային թեմայի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել են

- բարձր տեխնոլոգիական հենքի վրա ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացման ուղիներն և հնարավորությունները՝ շեշտադրելով գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության անհրաժեշտությունը,
- բարձր տեխնոլոգիական տնտեսության դիվերսիֆիկացման ինստիտուցիոնալ մոտեցումները և հեռանկարները ՀՀ-ում
- ինովացիոն տնտեսությունը բնութագրող համաթվեր, ենթահամթվեր և մի շարք ցուցիչներ

Հետազոտության արդյունքում բացահայտվել են

1. դիվերսիֆիկացման և թվայնացման առանձնահատկությունները ՀՀ-ում, մասնավորապես հիմնավորվել է, որ ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացման հնարավոր ուղիներից է համարվում գիտելիքահենք տնտեսության կառուցումը՝ հիմնված գիտատեխնիկական առաջընթացի համար առավել լուրջ նախադրյալների առավելագույնս իրացման վրա:

2. բացահայտվել է, որ ՀՀ տնտեսության թվայնացման համատեքստում առկա հիմնական սպառնալիքներն ու ռիսկերը՝ շեշտադրելով այնպիսիները, որոնց հետ կարող է բախվել պետությունը, եթե հետ մնա համաշխարհային թվայնացման տեմպից, ինչը կարող է լուրջ սպառնալիք դառնալ ազգային անվտանգության տեսանկյունից:

Վերլուծված համաթվերի և ենթահամաթվերի, ցուցանիշների հիման վրա գնահատվել են

1. ՀՀ ինովացիոն իրավիճակը և ներուժը, որի հիման վրա մշակվել է սեփական մոտեցում՝ հիերարխիկ մոդել, ինչը ներկայացված է բուրգի տեսքով, որում ուղենշվում են նոր տեխնոլոգիական իրականության մեջ ինովացիոն գաղափարի շարժը՝ ծննդից մինչև առևտրայնացում: Բուրգում առանձնացված են 4 մակարդակներ՝ անհրաժեշտ գործոններ և պայմաններ, ռեսուրսների առկայություն, կատարողական արդյունք և առևտրայնացում, որին հետևելու դեպքում կապահովենք գիտություն–տնտեսություն կապը, ինչի հետևանքով էլ գեներացված նորարարական, գիտական, ինժեներական կարողություններն արդյունավետ կերպով կառևտրայնացվեն:
2. Մշակվել է թվայնացման համար պատճառահետևանքային կապ դրսևորող մոդել, որտեղ ներկայացված է թվային տեխնոլոգիաների ներդրման դեպքում առաջացած պայմանները, օգուտները և ռիսկերը: Ըստ այդ մոդելի թվային տեխնոլոգիաների ներդրում հնարավոր է որոշակի չափանիշներին (մատչելիություն, թողունակություն, հասանելիություն և հուսալիություն) համապատասխան ինտերնետի առկայության դեպքում, ինչի արդյունքում կունանք հնարավոր օգուտներ՝ դիվիդենտներ (ներառականություն, արդյունավետություն և նորարարություն), տնտեսության ինչպես ինտենսիվ, այնպես էլ էքստենսիվ զարգացման դեպքում:
3. Մշակվել են քաղաքացիական հասարակության շրջանակներում գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացման միջոցով ինովացիոն գործունեության արդյունավետության բարձրացման որոշակի մեխանիզմներ, մասնավորապես՝ քաղաքացիական հասարակությանն անդամակցող կառույցների, պետության և քաղաքացիների միջև արդյունավետ երկխոսության և համագործակցության հիմքերի ձևավորումը և ամրապնդումը, ինովացիոն և ներդրումային բարենպաստ միջավայրերի զարգացման խթանումը:

Ուզում եմ նաև փաստել, որ մեր խմբի կողմից ներկայացվող թեման՝ <<Գործարարության զարգացման հեռանկարները ինովացիոն տնտեսության

համատեքստում (ՀՀ օրինակով)>> ներառվել **է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման երաշխավորված թեմաների ցանկում**: Հետազոտության **նպատակն է** մշակել և ներկայացնել գործարարության զարգացման և խթանման ինովացիոն մեխանիզմներ՝ ուսումնասիրելով և վերլուծելով գործարարության սպառնալիքները ու հնարավորությունները թվային տնտեսության պայմաններում, գործարարությունը և ինովացիոն տնտեսությունը բնութագրող համաթվեր, ենթահամաթվեր և ցուցիչներ, որոնց հիման վրա իրականացնել ԵԱՏՄ անդամ երկրների գործարարության մեջ առկա թվային ներուժի համապարփակ գնահատում ի դեմս ՀՀ:

Հաշվետու տարում հետազոտված թեմայի շրջանակներում հետազոտական խումբը հարապարակել է 47 հոդված, որից 25-ը արտասահմանյան պարբերականներում:

Ավարտելով ելույթս ցանկանում եմ իմ գնահատականը հչեցնել ինստիտուտի հաշվետու տարվա գործունեության կապակցությամբ, որն իմ գնահատմամբ կարելի է արժանացնել լավ գնահատականի, քանի որ 2021 թվականը իր ձեռքբերումներով իրոք տարբերվում է իմ ինստիտուտի աշխատելու մնացած տարեներից: